# ԵԲՐԱՅԱԿԱՆ ՄԵԼՈԴԻԱՆԵՐ

(Բայրօնից)

---

## *ՄՌԱՅԼ Է ՀՈԳԻՍ...*

—

Մռայլ է հոգիս։—Օ՜հ, փութա՛ լարել
Տաւիղը, որ դեռ կարող եմ լսել.
Թո՛ղ հնչեցնեն քո մատեր քնքոյշ
Ականջիս՝ նրա մրմունջներն անոյշ.
Եթէ քաղցր է դեռ մի յոյս այս սրտում
Այդ ձայնը դիւթիչ կը զարթեցնէ.
Եթէ մի արցունք կայ այս աչքերում,
Կը հոսի, սիրտըս կը զովացնէ։

—

Բայց երգըդ լինի վայրենի, դժխեմ.
Հեռո՛ւ քեզանից հնչիւն բերկրալից.
Ասեմ քեզ, մինստրէ՛լ, պէտք է արտասուեմ.
Եթէ ոչ սիրտըս կը պայթի վշտից։
Քանզի տրտմութեան կաթով է սընուած,
Անքուն եւ անձայն հեծծել է ցաւով.
Այժըմ վատթարն է նրան վիճակուած,
Կամ պայթել իսպառ, կամ նիրհել երգով։

*ՅՈՀԱՆՆԷՍ-ԽԱՆ ՄԱՍԷՀԵԱՆ*